ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am,
www.foi.am

25.08.2023
351-61

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության պետ Տաթև Մկրտչյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Մկրտչյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2021, 2022 թվականներին և 2023 թվականին օգոստոսի 25-ի դրությամբ քանի՞ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր է գրանցվել՝ ըստ տարիների:
2. Դրանցից քանի՞սն են գրանցվել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կողմից՝ ըստ տարիների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան